

ԲԱՆԱՍՑԵՂԾՈՒԹԻՒՆ

Թշուստութիւն մարդկան :

ՍԱՐԴՈՅ կոնանցածնի իբրև զի դոյզն եղաւ սահման .
 Լուրք զոր կեայ նա յերկրի՝ աւուրք ցաւոց և տրտմութեան .
 Սրանայ շոյտ քան ըզփայլակն , թօթափեցաւ զերդ ծաղիկ ,
 Իբրև ըստուեր 'ի խուսափել՝ ո՞ր ըզնորուն տեսցէ կրնիք .

Իայց զաղփաղփուն և յայդ պատկեր
 Խոնարհիս դու , անմահ տէր .
 Ի դա զաչացդ անպարագիծ
 Թօթափելով զակնարկիս :

Եւ զահեղակերպդ ըզքո՞ր դատաստան
 Սերկապարանոց առնես յանդիման .
 Իայց ո՞ր զալեխրոխտ բաւեսցէ սրբեւ
 Յընթացս անդ ըզգետ՝ ոյր պղտորեալ ջուրք
 Յաղբերաց անտի վիժեն թունաբեր :

Թէ զհանդերձեալս նորուն վարես և զբաղդ սանձես 'ի ձեռին ,
 Եւ ժամանակ նրմա չափես ընդ որ վազել անհնարին ,
 Դադարեա , թոյլ տուր աղէ , զի վայր մի դիւր ելեալ մարդկան
 Ըտըխուրն ամօքեսցէ իւր կեանս օտար իբրու վարձկան :

Օ՛ի հատեալ բընոյ ծառոյն ոչ մեռանի անյոյս անդարձ ,
 Լ՛յլ յոստաքանց նորուն 'ի բուն բողբոջք 'ի քուն կան կենաց .
 Տեսցուք զնա միւսանգամ զի ծերացեալ նորուն կոճեղ՝
 Բարունակս աճիւնաճիղ արձակեսցէ սաղարթագեղ ,

Յորժամ արմատ նորա յերկար
 Ի սիրտ երկրի նինջ էառ .

Եւ արմ գօսացեալ հողմոց խստաշունչ
 Ի հող ու 'ի փոշի դիակն անշունչ ,

Եթէ երբէք ալիք պայծառ նըմին մերձի այցելու ,
 Յանկարծոյն ոգի բերեալ ըզնիրհ թափէ նա մահու .
 Եւ դարնանի հասեալ սրղոխք յիւր նա չըջի մանկութիւն
 Եւ հերպանծ դիտակ 'ի վեր նա ամբառնայ ծաղկածին :

Իայց մարդոյ Կամ մի ընդ սեամս ըզգարշապարս ձրգեալ մահու
 Օ՛րնչ նմին մընասցէ այլ քան ըզգագաղսրն երկրաչու .
 Հեղեղատին քան ըզջուր երազահոս սահին իւր կեանք

Սահիճ անցանեն , սին չե թողեալ իւր յիշատակ .

Սինչ տունջեան աստղն պայծառ

Յերկնից շողայ 'ի կամար ,

Քուն երկարածիդ ըզնովաւ անկցի

Եւ մահահանգոյն նինջ 'ի սիրտ երկրի :

Ըստուած հրգօր , իսկ առ իմէ ըզքինուդ վրէժ անտեսելոյ

Ու 'ի գիրկըս զիս քնոյդ թողցես սուզել աներեկոյ ,

Ժամանակեալ ինձ անդրէն ըզգար թուցման զիմ ժամանակ ,

Եւ ըզպահ զայն ցանկալի յոր առնիցես ինձ յիշատակ :

Սխաճանեալ միանգամ մարդոյ զընթացս իւր համառօտ ,

Եւ 'ի թէ լուծեալ 'ի կապանաց տրտմահաղորդ՝

Տեսցէ 'ի հանդիպոյ ըզյաւիտեանց ծագեալ արե .

Ի դոյն ես քաջայոյս ընդ մարտս անցեալ երկարատե ,

Ըսպասեմ հանդերձելոց՝ զոր կեանք անմեղ յուսան պարգև :

Ըզդ ձայնիդ առնես ինձ , տէր , բանիցդ ես տաց սքատասխանի .

Եւ 'ի աղէ պարզեա բազուկ , կեանք իմ շնորհ է քում ձեռին .

Երբեմն առ քեզ ապախտաւոր , բայց զարդիս ծունր 'ի գետնի ,

Ո՛հ , զոր յանցեայն՝ վիշտք իմ և ցաւ զայն քաւեցին բազմադիմի

Կընիք յաւիտենից 'ի դպրութիւնդ արկցես կենաց .

Յոր դրոշմեր զառ քեզ յանցուածս և զանարգանս քոց օրինաց :

Ըզգողող ափափայից հարթեցին զգլուխըս ժամանակք ,

Եւ լեռնաբերձ ծերացեալ վիմ՝ 'ի վիհ սուզաւ հիմն 'ի յատակ .

Սուրբ ըզքարինս փորոքեցին , ծովու զեզերսըն բաղխելոյ

Յազթական ողողեաց , զափունս ընկձեալ 'ի հանդիպոյ :

Օայսգոյն ըզմարդ եղծանես , տէր , և դողդոջուն նորուն քայլից

Հրգօր բազկիդ կարկառելոյ նեցուկ նմին յառնես յերկնից .

Դու զգէմն նորուն թարշամես , դու կերպարան փոխես նըմին ,

Դու . . . զի՛նչ ևս այլ , հաստատեցեր 'ի նմա զերեսդ՝ և ել ոգին .

Չիք նորա այնուհետեւ ընդ ծրննդոցն մասն և բաժին .

Սա՛ւասիկ 'ի մահացուաց և յիւր մեկնեալ իսկ սիրելեաց

Հաւասարորդ ոչ ևս ելցէ նոցայն խընդի կամ թէ վշտաց :

Ո՞ր այն յոյս ամոքեսցէ յերկիր խոնարհ վիշտս ըզնորին ,

Սինչ 'ի հեծել լալահառաչ կենաց նորա տուաւ բաժին .

Օայս նմա ճակատագիր երկնից հրամանքըն կապեցին ,

Օի դառն հոգին հեծեծեսցէ , և վշտակիր ծիւրէ մարմին :

Լ.Ը. ՎԱՎԱՍԻՕՐ , Յարաստիւն 'ի ՅԲԲ . ԳԼ . ԺԴ .

Բարգմանեաց Խ . Գ .